Հաստատված է
Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2015թ. մարտի 31-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ
Ռեկտոր Ռուբեն Միրզախանյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍԿՍՆԱԿ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքականության հիմնավորումը: Սույն քաղաքականությունը սահմանում է ՀՊՄՀ սկսնակ աշխատակազմի հետազոտական գործունեության և միջազգային հետազոտությունների իրականացման խրախուսման գործընթացի առկա վիճակը և զարգացման ծրագիրը /այսուհետև ծրագիր/:

Քաղաքականությունը միտված է նաև կարգավորելու ծրագրով նախատեսվող քայլերի արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև դրանց խոչընդոտող գործոնների վերացումը:

Ավանդաբար հետազոտական գործունեությունը իրականացվում էր տարբեր թեմատիկ ծրագրերում ներգրավվածության, բազային ֆինանսավորման եղանակներով, ինչպես նաև գիտական աստիճանների շնորհման կանոնակարգերին և ընթացակարգերին համապատասխան: Նշված գիտահետազոտական գործունեության ուղղություններում, մեր կարծիքով, բավարար ուշադրության չեն արժանացել համալսարանի սկսնակ աշխատակազմի խրախուսման և հետազոտությունների միջազգայնացման հիմնախնդիրները: Վերջիններս կարող են էապես բարելավել հետազոտությունների իրականացման որակը և գիտական մտքի ապրանքայնացման ներկա վիճակը, հետազոտողների պատրաստման և նրանց կրթական

գործընթացներում ակտիվորեն ներգրավման գործընթացները: Քաղաքականության մշակման անհրաժեշտությունը բխում է նաև համալսարանի երիտասարդ մասնագետներին հետազոտական աշխատանքներում ներգրավվածության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև միջազգային հետազոտությունների խթանման, համալսարանի միջազգայնացման ընդհանուր ռազմավարության համապատասպան միջոցառումների իրականացման հրամայականից:

Սույն քաղաքականությունը և դրանից բխող գործողությունները կարող են ուղենիշ հանդիսանալ համալսարանի քաղաքականության իրագործողների և որոշումների կայացման գործընթացում ներգրավված անձանց համար: Քաղաքականությունը նաև ուղեցույց է մանկավարժական համալսարանում հետազոտական գործունեության հետագա բարելավման համար:

Քաղաքականության մշակման համար հիմք են հանդիսացել ուսումնական ռեսուրսների հասանելիության և արդյունավետության գնահատման ու բարելավման ընթացակարգի նախագիծը, համալսարանի ռազմավարական ծրագիրը: Քաղաքականության մեջ ամրագրված քայլերի և գործողությունների իրականացման համար անհրաժեշտ ենք համարում որոշակի նախանշված նպատակների իրականացումը, որոնք պետք է մանրամասն պլանավորվեն և իրականացվեն պատասխանատուների կողմից: Նշված քայլերի ու գործողությունների իրականացումը դուրս են սույն քաղաքականության սահմաններից, սակայն կարող են լրացնել նրան:

Հիմնական հասկացություններ:

Գիտությունը ճանաչողական գործունեության հատուկ տեսակ է՝ ուղղված բնության, հասարակության և մտածելակերպի վերաբերյալ օբյեկտիվ, համակարգված և հիմնավորված գիտելիքների ստացմանը, ճշտմանը և ստեղծմանը:

Գիտնականը գիտելիքի հայտնագործման գործընթացում ընդգրկված անձ է, որն օգտագործում է գիտական մեթոդ: Գիտնականը կարող է փորձագետ լինել գիտության մեկ կամ մի քանի ոլորտներում:

Համալսարանի սկսնակ աշխատակազմ ասելով՝ նկատի ունենք համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի 25-40 տարեկան աշխատակիցներին, որոնք հետազոտություն են իրականացնում համալսարանում կամ հետազոտական, հանրային կամ արդյունաբերական կազմակերպություններում:

Հետազոտությունը գիտելիքի պաշարն ավելացնելուն ուղղված համակարգված ստեղծագործական աշխատանքն է կամ գիտելքիների օգտագործումն է կիրառական մշակումների համար: Հետազոտությունն իրականացվում է նոր փաստերի հայտնագործման կամ հաստատման, նախորդ աշխատանքների արդյունքների հաստատման, նոր կամ արդեն առկա հիմնախնդիրների լուծման, տեսությունների զարգացման, նոր տեսությունների հաստատման նպատակով: Հետազոտություն է նաև նախկին հետազոտությունների ընդլայնումը, հետազոտական գործիքակազմի, ընթացակարգի կամ գիտափորձի պիտանիության, հավաստիության ստուգումը:

Հետազոտողը հետազոտություն իրականացնող անձն է, որն իրականացնում է գիտելիքի որոնում կամ համակարգված ուսումնասիրություն փաստերի հայտնաբերման նպատակով: Հետազոտողը կարող է աշխատել կրթական, արտադրական պետական կամ մասնավոր կազմակերպություններում:

Խրախուսումը բնութագրում է հետևյալ քայլերն ու գործողությունները.

1) տեղեկատվության տրամադրում ապրանքի կամ ծառայության մասին սպառողներին, ինչպես նաև այլ շահակիցներին, տեղեկատվության հասանելիութան ապահովում,
2) պահանջարկի զարգացում, ավելացում,
3) ապրանքի կամ ծառայության տարբերակում:

1. Տեղեկատվության տրամադրում և դրա հասանլեիության ապահովում: Այս նպատակով նախատեսվում է՝ ա/հետազոտության արդյունքների ապրանքայնացման քայլերի մշակում, բ/ շահառուների, շահակիցների և թիրախային խմբերի առանձնացում, գ/ նրանց համարժեք հասանելի և որակյալ տեղեկատվության ապահովում: Այս քայլերը կարող են իրականացվել հոդվածների տեսքով, հրատարակությունների հստակ քաղաքականության և ընթացակարգերի մշակման և ներդրման, միջոցով և այլն:

2. Պահանջարկի զարգացման համար անհրաժեշտ է ուսումնասիրել առկա պահանջարկը, պարզել դրա խոչընդոտները, օրինակ՝ հավատի բացակայություն, կրթության ոլորտում հստակ հետազոտական ապրանքի կիրառման կամքի բացակայություն և այլն:

3. Ապրանքի կամ ծառայության տարբերակում: Տարբերակման համար անհրաժեշտ է հստակ տարանջատել ներքին և արտաքին սպառման օբյեկտները, կոնկրետ ունենալ ներդրման օղակ, որը կզբաղվի այդ քայլերով:

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ-Ի ՍԿՍՆԱԿ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի կարևորագույն գործառույթներից է բացի դասախոսական աշխատանքից՝ տիրապետել գիտական հետազոտության մեթոդներին, հետազոտական աշխատանքների իրականացման ռազմավարությանը, գիտական աշխատանքների ժամանակակից վերլուծության մեխանիզմներին, գիտական արդյունքի՝ հոդվածի, մենագրության, ատենախոսության ձևակերպմանը: Ընդ որում նմանատիպ աշխատանքները սկսնակ դասախոսը պետք է իրականացնի ամբողջ տարվա ընթացքում: Այս խնդիրը խիստ արդիական է և հաշվի է առնվում հատկապես դասախոսների հայտարարված թափուր տեղերում ընտրվելու կամ վերընտրվելու ժամանակ: Եթե մագիստրոսական, հայցորդական կամ ասպիրանտական ծրագրերի ուսումնասիրման ժամանակ հետազոտական աշխատանքների վրա դարձվում էր ուշադրություն և այն ուղղորդվում էր գիտական ղեկավարի կողմից, ապա հետագա դասախոսական գործունեության ժամանակ վերը նշված գործունեությունը ոչ միշտ է, որ իրականացվում է: Հետազոտությունները ցույց են տվել, որ ատենախոսության պաշտպանությունից հետո դասախոսը ոչ միշտ է զբաղվում հետազոտական աշխատանքով:

Բուհերում դասավանդման և գիտական գործունեության հետ կապված Հայաստանը շարունակում է կիրառել խորհրդային մոդելը, ուր տարբեր եղանակներով տարանջատվում են դասավանդման և գիտահետազոտական աշխատանքները, այդ թվում՝ գիտահետազոտական աշխատանքների զգալի մասն իրականացվում է բուհերից անկախ գիտահետազոտական ինստիտուտներում: Բացի այդ մեզանում համալսարանների դասախոսական կազմը չունի կամ գրեթե չունի գիտահետազոտական աշխատանքով զբաղվելու պարտականություններ: Աշխարհի լավագույն բուհերում ի տարբերություն Հայաստանի, դասախոսի և գիտաշխատողի աշխատանքը համատեղվում է, ավելին՝ դասախոսը պարտավոր է շարունակաբար գիտությամբ զբաղվել՝ դասախոսական գործունեությունը պահպանելու համար:

Ներկայումս գիտահետազոտական աշխատանքով զբաղվելը իրականացվում է կամ գիտական հետաքրքրությունների կամ գրանտային ծրագրերի շրջանակներում: Առաջին դեպքում հետազոտական աշխատանքները կրում են տարերային բնույթ, իսկ երկրորդ դեպքում մրցույթային բնույթ, այսինքն ներկայացված գիտական թեմաներից ոչ բոլորն են մրցույթով

անցնում: Սա խոսում է այն մասին, որ այդ բնագավառում դեռևս շատ անելիքներ կան: Ձեռքբերում կարելի է համարել, որ մրցույթային հանձնաժողովը բոլոր գիտական խմբերի համար սահմանել է պարտադիր 1 սկսնակ երիտասարդ հետազոտողների համար պարտադիր տեղ: Սրանով, կարծես թե, երիտասարդ գիտնականների մուտքը գիտական ծրագրերին դառնում է մատչելի, սակայն սա լիարժեք հարցի լուծում չէ: Պետք է փաստել, որ Գիտության պետական կոմիտեն գիտական թեմաների մրցույթ է կազմակերպում թե՛ բազային, և թե՛ թեմատիկ ծրագրերի շրջանակներում: Պարբերաբար Գիտության կոմիտեն հայտարարում է մրցույթներ երիտասարդ գիտանականների համար: Ճիշտ է սա պետական մոտեցում է, սակայն ներկայիս գիտության զարգացման գործընթացում այսպիսի միջոցառումները դեռևս լիարժեք կերպով խնդիրը չեն լուծում:

Հետազոտությունների գերակշիռ մասը ընկնում է դասախոս-գիտնականի անձնական նախաձեռնության վրա: Իսկ սա կրում է ոչ պարբերական և համակարգված բնույթ:

Ներկայիս մարտահրավերների համատեքստում, երբ դրված է հետազոտական համալսարաններ ունենալու հարցը, հատկապես սկսնակ հետազոտողներին բուհում գիտությամբ զբաղվելը խիստ կարևորում է և արդիական բնույթ է ստանում: Առավել ևս, երբ հետազոտական ծրագրերը կրում են միջազգային բնույթ: Գիտությունը չի կարող զարգանալ սպոնտան կերպով, այն միշտ պահանջում է լայն համագործակցություն: Այս հարցին կարծես թե գիտության կոմիտեի կողմից նույնպես ուշադրություն է դարձվում՝ միջազգային գրանտային մրցույթների ձևով:

Երբ վերլուծում ենք նմանատիպ ծրագրերի շրջանակներում համալսարանի գիտնականների մասնակցությունը, նկատում ենք, որ այն նույնպես աննշան մաս է կազմում:

Շատ կարևոր խնդիր է գիտական թեմաների ընտրության հարցը: Թեմաների ընտրությունը կատարվում է հատկապես գիտական ղեկավարի կողմնորոշմամբ՝ հիմնականում շարունակվում է գիտական ղեկավարի թեմատիկան: Երիտասարդ գիտնականը կարծես թե դուրս է մնում թեմայի ընտրության գործընթացում: Առավելապես դրսևորվում է բազմաթեմայնությունը, որը գիտական դպրոցի սակավության արդյունք է: Հետագա գիտական արդյունքները նույնպես հիմնականում թեկնածուական ատենախոսական թեզի շարունակությունն են: Գիտական գործընթացի համակարգումն իրականացվում է ամբիոնների կողմից: Իսկ հանրապետական և միջազգային ծրագրերում բուհի գիտնականների մասնակցությունը ապահովում և ուղղորդում է համալսարանի գիտահետազոտական վարչությունը: Նույն վարչությունն է իրականացնում գրանտային ծրագրերի համակարգումը, գիտական կոնֆերանսների կազմակերպումը, գիտական պարբերականների և ժողովածուների

հրատարակումը, համալսարանի երիտասարդ գիտնականների խորհրդատվությունը և գիտական ծրագրերին մասնակցելը:

Դասախոսների մի ստվար զանգված գիտահետազոտական աշխատանքներ կատարում են սեփական նախաձեռնությամբ և սեփական հետաքրքրություններով պայմանավորված թեմատիկայով:

Համալսարանում կատարվող գիտական աշխատանքների հաշվետվությունները քննարկվում են տարվա վերջում համալսարանների ամբիոններում, իսկ ընդհանուր ձևով՝ գիտական խորհրդի նիստում:

Ներկա վիճակի բնութագրականներից են.

1. Շարունակվում է բարձր որակավորում ունեցող գիտական կադրերի արտահոսքը:
2. Շատ ցածր է երիտասարդ գիտնականների մասնակցությունը գիտական ծրագրերում:
3. Գիտական կադրերի պատրաստման պետական պատվերի ձևավորումը կատարվում է տարրերայնորեն, հաշվի չի առնվում պահանջարկ-առաջարկ կապը:
4. Նախկինում ձևավորված գիտական դպրոցները կորցրել են իրենց բարձր դիրքերը, խաթարվել է գիտական դպրոցների սահուն և նպատակային սերնդափոխության գործընթացը:
5. Բավարար ուշադրություն չի դարձվում գիտական արդյունքի ապրանքայնացման հիմնախնդրին:
6. Գիտական ոլորտի բարեփոխումները ընթանում են շատ դանդաղ:
7. Թույլ են գիտական կապերը այլ պետությունների և հատկապես հայկական սփյուռքի հետ:
8. Չի բավարարում գիտահետազոտական աշխատանքների նյութատեխնիկական բազան:
9. Հասարակական գիտակցության մեջ նվազել է գիտության հեղինակությունը և գիտական աշխատողի մասնագիտական կադրերի գրավչությունը:

ՍԿՍՆԱԿ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ /ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՎՈՐ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ/

Խրախուսման գործընթացը պետք է համապատասխանի հետազոտողների գիտահետազոտական ուղղվածություններին ու նրանց կարիքներին:

2000թ.-ի մարտին Եվրոպական խորհուրդը համաձայնության եկավ նոր ռազմավարական նպատակի շուրջ՝ Եվրոպան և նրա տնտեսությունը դարձնելու ամենամրցունակ և շարժուն գիտելիքահեն տնտեսությունն աշխարհում, կայուն տնտեսական աճին ընդունակ: Հաշվի առնելով հետազոտության և զարգացման կարևորությունը՝ տնտեսական աճը խթանելու գործում, Եվրոպական միությունը հաստատեց դրա աջակցությունը եվրոապան հետազոտական տարածքի նպատակների համար: 2005թ. ապրիլին եվրոապական խուրհուրդը վերահաստատեց իր պարտավորությունը՝ ունենալու բազմաթիվ մոտիվացված և պատրաստված հետազոտողներ: (European Commission 2005, p.9) Համապատասխանաբար, եվրահանձնաժողովի և եվրախորհրդի կողմից մշակվեցին կոնկրետ քաղաքականություններ և ռազմավարություններ անհրաժեշտ փոփոխությունների համար: Ընդունված համապատասխան բանաձև "Հահամալսարանների մոդեռնացում գլոբալ գիտելիքի տնտեսական եվրոպական մրցունակության համար, որի համաձայն եվրոապական համալսարանները պետք է ունակ լինեն լավագույնս մրցունակ լինելու աշխարհում: Ընդունված փաստաթղթերում մատնանշվում էր հասարակության և շահակիցների կարիքներին համապատասխան հետազոտություն իրականացնելու անհրաժեշտությունը և թափանցիկության, հաշվետվողականության և համադրելիության ապահովման անհրաժեշտությունը:

Եվրոպական կրթական և հետազոտական տարածքում ներկայումս առանձնացվել են մի շարք առանցքային չափանիշներ, որոնք հիմք են հանդիսանում հետազոտական գործունեության չափման և գնահատման համար.

Դրանք, համաձայն մի շարք հետազոտությունների[1], չափում են հետազոտական գործունեության տարբեր բաղադրիչները՝ ներառյալ ներդրումները, գործընթացները, ծավալը, արդյունքները, ազդեցությունն ու արդյունավետությունը:

Ներդրումները չափում են մարդկային, ֆիզիկական, ֆինանսական ռեսուրսները, որոնք հատկացվում են հետազոտությանը:

Գործընթացները չափում են այն, թե ինչպես է իրականացվում հետազոտությունը՝ ներառյալ դրա կառավարումն ու գնահատումը:

Հետազոտության **ծավալը** չափում է հետազոտական ապրանքի քանակը:

[1] EUROPEAN COMMISSION Assessing Europe's University-Based Research Expert Group on Assessment of University-Based Research Directorate-General for Research 2010 Science in Society 2008

Արդյունքները վերաբերում են գործունեության մակարդակին, ձեռքբերումներին, ներդրումներին, որոնք իրականացնում են հետազոտողները գիտական գիտելիքի զարգացման մեջ:

Ազդեցությունն ու շահավետությունը չափում են այն ներդրումները, որոնք հետազոտության արդյունքում իրականացվում են հասարակության, մշակույթի և տնտեսության մեջ:

Զարգացած երկրներում երիտասարդ կամ սկսնակ աշխատակազմի /հետազոտողների/ խրախուսումը կենտրոնական խնդիր է համալսարանների ռազմավարության մեջ: Համալսարանները շատ հաճախ բազմաթիվ դրամաշնորհներ և աշխատատեղեր են առաջարկում դասավանդման և հետազոտության համար: Նրանք նաև հաճախ մշակում և ներդնում են մի շարք չափանիշներ՝ նպատակ ունենալով խրախուսել սկսնակ համալսարանական աշխատակազմին: Օրինակ, համալսարանները որպես կանոն, տրամադրում են դրամաշնորհներ և կրթաթոշակներ սկսնակ աշխատակազմին կամ կիրառում են պրոֆեսորի ասիստենտի մոդելը, որը հեռանկարներ է բացում հետագայում դրական գնահատվելու դեպքում պրոֆեսորի պաշտոնը առավել տևական ժամանակով զբաղեցնելու համար: Նման պրակտիկան կիրառվում է բազմաթիվ երկրներում և հստակ կանոնակարգված է համալսարանի կողմից ընդունված իրավական ակտերով; Երբեմն կիրառվում են մենթորության ծրագրեր, որոնք նպատակամետ են ապահովելու սկսնակ աշխատակազմի հետազոտական գործունեությունը:

Ներկայումս հետազոտական գործունեության գնահատման համար մշակվել են մի շարք չափանիշներ և չափորոշիչներ, որոնք կարող են օգտակար լինել սկսնակ աշխատակազմի հետազոտական գործունեության խրախուսման և առավել ևս՝ դրանց միջազգայնացման խթանման տեսանկյունից;

Ստորև կներկայացնենք տարբեր իրավական ակտերի և ծրագրերի վերլուծության, ինչպես նաև հետազոտության գնահատման ընդունված կառուցակարգերի վերլուծության հիման վրա մեր կողմից առաջարկվող գործողությունների ծրագիրը: Ծրագրի մշակման ընթացքում մենք, որպես մեթոդաբանական հիմք, դիտարկել ենք ֆորս-ֆիլդ վերլուծության տեխնոլոգիան, որը հնարավորություն կտա կատարել ցանկալի արդյունքին միտված փոփոխություններ և անհրաժեշտաբար պահպանել ստատուս քվոն բոլոր այն դեպքերում, երբ այդ փոփոխությունների իրականացումն ստեղծված իրավիճակում կարող է խիստ ռիսկային կամ խնդրահարույց լինել:

Գործողությունների ծրագրի մշակման համար ուղենիշ են հանդիսացել նաև «***Եվրոպայի երիտասարդ գիտնականների ֆորում***»-ի կողմից մշակված հետևյալ անանցքային հանձնարարականներն ու սկզբունքները.

1. **Առավել ճկուն հետազոտական կառույցների և ֆինանսավորման կառուցակարգերի զարգացում:** Սա նախ և առաջ առնչվում է հետդոկտորական հետազոտություններին և դրանց շրջանակներում շարժունության խթանմանը:
2. **Գիտական աստիճանների փոխադարձ ճանաչում և արևելյան Եվրոապայի հետազոտական շարժունության խթանում:** Այս հանձնարարականի իրագործումը ենթադրում է նաև դրամաշնորհների և հետազոտողների խրախուսում՝ հաշվի առնելով տվյալ երկրում, /կազմակերպությունում/ հետազոտողների միջին տարիքը, ենթակառուցվածքները:
3. **Առավել մեծ ինքնուրույնություն և անկախություն գիտնականներին իրենց կարիերայի ընթացքում՝** լավագույն գիտնականներին թիրախային ֆինանսավորման, հետազոտող առաջնորդների պատրաստման, հետազոտությունների միջազգային ցանցերի, համատեղ լաբորատորիաների ստեղծման միջոցով:
4. **Դրամաշնորհների վերադարձողների համար**, որոնք պետք է տրամադրվեն մասնակիորեն անհատներին ու կազմակերպություններին: Այս քայլը նպատակաուղղված է ուղեղների արտահոսքի նախականխմանը:
5. **Եվրոպական հետազոտական տարածքի ընդլայնման խրախուսում**, որը ենթադրում է դիպլոմների փոխադարձ ճանաչում, վարձավճարների չափի համադրելիության ապահովում և այլն:
6. **Հետբուհական կրթական աստիճանների շրջանակներում կազմակերպվող դասավանդման կարողությունների զարգացման աջակցություն**:

Այսպիսով, վերլուծելով եվրոպական կրթական և հետազոտական տարածքում հետազոտության կազմակերպման առանցքային դրույթներն ու մոտցումները՝ առաջարկում ենք սկսնակ հետազոտողների խրախուսման և հետազոտությունների իրականացման գործընթացի միջազգայնացման գործընթացը խթանելու նպատակով ներդնել հետազոտության խրախուսման հատուկ կառուցակարգեր՝ հիմք ընդունելով հետազոտության գնահատման ժամանակակից մոտեցումները, որոնք մշակվել են եվրոպացի փորձագետների կողմից /տես աղյուսակ 1./: Այն ենթադրում է հետազոտության գնահատման չափանիշների, դրանց գործարկմանը նպաստող և խոչնդոտող գործոնների վերլուծության միջոցով համապատասխան

գործընթացի զարգացման հստակ գնահատում և հանձնարարականի մշակում, որը կիրականացվի ՀՊՄՀ գիտահետազոտական կենտրոնի կողմից:

Աղյուսակ 1

Գործողությունների ծրագիր

Սկսնակ աշխատակազմի հետազոտական գործունեությունը և միջազգային հետազոտությունների իրականացումը խրախուսելու քաղաքականության

Չափանիշներ	Հնարավորություններ	Սահմանափակումներ	Զարգացման ենթակա գործոններ
1. Հետազոտության արդյունավետություն			
1.1 Հրապարակումներ և արդյունք	Միայն կոնկրետ հրատարակությունները պետք է հաշվի առնել	Տարբեր գիտակարգեր տարբեր տիպի արդյունքներ են ներկայացնում	Տվյալների շտեմարանի ստեղծում հետազոտության ուղղությունների համար և համապատասխան վիճակագրության վարում
1.2 Յուրքանչյուր սկսնակ աշխատակցի համար հրապարակումների և արդյունքների հաշվարկում	Միջազգային համադրելիության ապահովում	հետազոտության և դասավանդման ժամաքանակի համադրելիության հաշվարկման դժվարություններ	Իրականացնել դասավդնող և հետազոտող աշխատակազմի /սկսնակ աշխատակազմ/ հասկացությունների հստակեցում, սահմանել նշված հասկացությունները, ապահովել դասավանդման և հետազոտության աշխատաժամանակի հաշվարկի համադրելիությունը:
1. Որակ և ազդեցություն			

2.1 Ազդեցության բարձր վարկանիշով ամսագրերում հրապարակումների քանակ	Լայնորեն կիրառվում է	Միշտ չէ, որ իրական արդյունքի որակի մասին է վկայում այսպես կոչված ազդեցության գործակիցը	Իրականացնել որակական գնահատում՝ հենվելով ոչ միայն ազդեցության գործակցի, այլև՝ փորձագիտական կարծիքների վրա:
2.2 հղումներ, հղման ինդեքսներ	Լայնորեն կիրառվում է և թույլ է տալիս դատել անհատ հետազոտողի կամ խմբի հետա-զոտության արդյունքների տարածման մասին	սոցիալական գիտություններում երբեմն սա լայնորեն չի կիրառվում	Հղման ընթացակարգերի կիրառում և տվյալների շտեմարանի ստեղծում և մշտական թարմացում
2.3 Տեղական և միջազգային գիտաժողովներ	Թույլ է տալիս գնահատել հետազոտողի ճանաչումը և որոշակի հետադարձ կապ է ապահովում	Դժվար համադրելի է միջազգային կամ տարբեր գիտակարգերի համատեքստում:	Մշակել գիտաժողովների և տարբեր գիտակարգերի համար հեղինակավոր գիտաժողովների չափանիշներ: Ստեղծել համապատասխան տվյալների շտեմարան սկսնակ հետազոտողների համար:
2.4 Հեղինակավոր պարգևներ և կոչումներ	Չափանիշը ստուգելի է	Չկան միջգիտական համեմատության եղանակներ	Ապահովել միջազգային ընդունելի ամակարգերի հասանելիությունը
2.5 Միջազգային հետազոտական հրավերներ	Ապահովում է փոխադարձ աջակցու-թյունն ու գնահատումը	Դժվար համադրելի է միջազգային կամ տարբեր գիտակարգերի համատեքստում: Հաճախ սկսնակ հետազոտողը լայն ճանաչում չի ունենում	Ապահովել միջազգային տարբեր հետազոտական հրավերների հասանելիությունը
2.6 Հեղինակավոր ամսագրերի խմբագրում կամ գրախոսում	Թույլ է տալիս գնահատել հետազոտողի լայն ճանաչումն ու	Դժվար համադրելի է միջազգային կամ տարբեր գիտակարգերի համատեքստում: Հաճախ սկսնակ	Ստեղծել համապատասխան տվյալների շտեմարան սկսնակ հետազոտողների համար:

	հեղինակությունը	հետազոտողը լայն ճանաչում չի ունենում:	
2. Նորարարություն և հասարակական շահավետություն			
3.1 Արտաքին հետազոտական եկամուտներ /դրամաշնորհներ պետական և ոչ պետական/	Համեմատելի չափանիշ է: Արդյունավետության մասին կարող է վկայել արդյունաբերության պատրաստակամությունը ներդրումներ կատարել համապատասխան հետազոտություններում:	Խիստ կախված է երկրի արդյունաբերության և կրթության կապից և գիտակարգից:	Մշակել նշված ոլորտի միջազգայնացման ռազմավարություն սկսնակ աշխատակազմի համար: Բուհ-գործարար աշխարհ համագործակցության կառուցակարգերի վերանայում:
3.2 Հետբուհական կրթություն ստացողների աշխատատեղով ապահովվածությունը	Չափանիշը հետազոտությունը զարգացման մեջ ներդնելու գնահատման մեջ կիրառելի է	Կախված է երկրի սոցիալ-տնտեսական վիճակից	Ստեղծել համապատասխան տվյալների շտեմարան սկսնակ աշխատակազմի համար: Մշակել նշված ոլորտի միջազգայնացման ռազմավարություն սկսնակ աշխատակազմի համար:
3.3 Վերջնական օգտագործողի գնահատական	Վկայում է ներդրման հնարավորությունների մասին	Տարբեր գիտակարգերում էապես տարբերվում է	Մշակել միջազգային համադրելիության չափանիշներ սկսնակ աշխատակազմի համար:
3. Կայունություն և աստիճան			

3.1. Հետբուհական կրթության ոլորտում ներգրավվածների և անձնակազմի հարաբերակցությունը	Հետազոտության քանակական ցուցանիշ է	Ոչ միշտ է քանակը որակական ցուցանիշ հանդիսանում՝հատկապես սոցիալական գիտություններում	Մշակել միջազգային համադրելիության չափանիշներ սկսնակ աշխատակազմի համար:
3.2. Հետազոտողի պաշտոնում ներգրավված սկսնակ անձնակազմի քանակը	Հետազոտության քանակականական ցուցանիշ է	Ոչ միշտ է քանակը որակական ցուցանիշ հանդիսանում՝հատկապես սոցիալական գիտություններում	Մշակել միջազգային համադրելիության չափանիշներ սկսնակ աշխատակազմի համար:
3.3. Միջազգային համագործակցության մեջ ներգրավված հետազոտողների քանակը	Առանցքային ցուցանիշ է	Դժվար է հաշվարկել տեղեկատվության պակասի կամ հստակ սահմանումների բացակայության պարագայում	Ստեղծել տվյալների համապատասխան շտեմարան սկսնակ աշխատակազմի համար:
3.4. Դոկտորների /թեկնածուների/ քանակ	Հնարավոր է գնահատել ինստիտուցիոնալ /ներհամալսարանական/ մակարդակում	Տարբերվում է ըստ գիտակարգերի և հաճախ որակական վերլուծություն է պահանջում: Համադրելի չէ միջազգային չափորոշիչների սեկտորալ ՈԱԾ-ի բացակայության պարագայում	Մշակել համապատասխան գործողությունների ծրագիր և իրականացնել վերլուծություն
4. Հետազոտական ենթակառուցվածք			

4.1. Ակտիվ հետազոտող աշխատակիցներ	Հետազոտության կարողունակության և ինտենսիվության ցուցանիշ է	Տարբերվում է ըստ գիտակարգերի և չկան հստակ սահմանումներ կամ գնահատման միջազգայնորեն համադրելի չափանիշներ	Մշակել գնահատման հստակ չափանիշներ սկսնակ աշխատակազմի համար:
4.2. Ներդրումը համալսարանական հետազոտություններում	Խիստ կարևոր չափանիշ է	Հաճախ դժվար է գնահատել նույնիսկ մեկ համալսարանի սահմաններում	Մշակել գնահատման հստակ չափանիշներ սկսնակ աշխատակազմի համար
4.3. Հետազոտական ենթակառուցվածք և պայմաններ. լաբորատորիաներ, գրքեր, ամսագրեր, դրանց քանակական և որակական բնութագրերը	Գնահատելի է ներհամալսարանական մակարդակում	Դժվար է համադրել միջազգային մակարդակում	Մշակել միջազգային համադրելիության չափանիշներ սկսնակ աշխատակազմի համար
4.4. Հետազոտական էթիկա	Համակողմանի չափանիշ է, որի համար կիրառելի է փոխադարձ գնահատումը, փորձագիտական գնահատումը	Միասնական չափորոշիչների և/կամ ռեսուրսների բացակայության, անհասանելիության պարագայում կարող է ռիսկային լինել, ինչպես նաև դժվար համադրելի է տարբեր գիտակարգերի համար:	Մշակել հետազոտական էթիկայի միջազգային համադրելի չափանիշներ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍԿՍՆԱԿ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՐԳԸ

1. Ներածություն.

Սույն կարգը սահմանում է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում բոլոր սկսնակ հետազոտողների վրա:

2. Ընդհանուր դրույթներ.

ա) ՀՊՄՀ-ի ասպիրանտական (հայցորդությունը) կրթությունը համակարգում բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման երրորդ աստիճանն է, որտեղ ակնկալվում է պատրաստել մասնագետներ, ովքեր կտիրապետեն գիտական հետազոտության նորագույն մեթոդներին, տեխնոլոգիաներին, հետազոտությունների մշակմանը, արդյունքների մեկնաբանմանը

բ) ՀՊՄՀ-ում սկսնակ հետազոտողների պատրաստման ծրագիրը կազմված է ուսումնական և հետազոտական կրթամասերից:

Սկսնակ հետազոտողների ծրագիրը ներառում է.

ԱՍՊԻՐԱՆՏԻ ԿՐԹԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԾՐԱԳԻՐ

<u>Ուսուցման առաջին տարին-60 կրեդիտ</u>

1. Հումանիտար կրթամաս-12 կրեդիտ
2. Ընդհանուր պատրաստվածության կրթամաս- 7 կրեդիտ
3. Որակավորման քննություն (փիլիսոփայություն) - 0,5 կրեդիտ
4. Որակավորման ստուգարք (ինֆորմատիկա) - 0,5 կրեդիտ
5. Հետազոտական աշխատանք -40 կրեդիտ, որից
   -գիտական սեմինարներ և աշխատաժողովներ- 5 կրեդիտ՝
   -ինքնուրույն աշխատանք գրադարաններում,
   -գրականության հավաքում- 5 կրեդիտ

<u>Ուսուցման երկրորդ տարի- 60 կրեդիտ</u>

1. Մասնագիտական պատրաստվածության կրթամաս -12 կրեդիտ
2. Որակավորման քննություն (օտար լեզու) – 0,5 կրեդիտ
3. Գիտամանկավարժական պրակտիկա – 2,5 կրեդիտ
4. Հետազոտական աշխատանք - 45 կրեդիտ, որից՝
   -գիտական սեմինարներ և աշխատաժողովներ- 5 կրեդիտ
   - գրականության մշակում – 5 կրեդիտ
   - մասնագիտական հոդվածների տպագրում- 5 կրեդիտ

<u>Ուսուցման երրորդ տարի- 60 կրեդիտ</u>

1. Երկու որակավորման քննություն մասնագիտությունից - 1 կրեդիտ
2. Հետազոտական աշխատանք - 59 կրեդիտ, որից՝
   -գիտական սեմինարներ և աշխատաժողովներ - 4 կրեդիտ
   -մասնագիտական հոդվածների տպագրում-5 կրեդիտ
   -եզրափակիչ ատեստավորում - 5 կրեդիտ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍԿՍՆԱԿ ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ

1. Ընդհանուր դրույթներ.

ա) Տարվա ընթացքում հետազոտական գիտական աշխատանքը հանդիսանում է սկսնակ հետազոտողների պատրաստման կրթական ծրագրի պարտադիր բաղադրամաս և ուղղված է գիտական մասնագիտական կոմպետենցիաների ձեռքբերմանը:

բ) Գիտական հետազոտական աշխատանքն ենթադրում է սկսնակ հետազոտողների մոտ ձևավորել գիտափորձին նախապատրաստվելու, գիտափորձ կատարելու, ստացված արդյունքների մշակման ձևերի, արդյունքները հոդվածների և թեզերի ձևով ներկայացնելու կարողություններ:

դ) Գիտական հետազոտական աշխատանքը բոլոր ասպիրանտների և հայցորդների համար նախանշում է ընդհանուր ծրագիր, ինչպես նաև նեղ մասնագիտական առանձնահատկություններից բխող անհատական ծրագիր:

ե) Նմանատիպ գիտահետազոտական աշխատանքները կատարվում են մասնագիտական ամբիոնում, գիտական լաբորատորիայում, գիտահետազոտական ինստիտուտում և կենտրոններում:

զ) Գիտահետազոտական աշխատանքները կատարվում են գիտական ղեկավարի, փորձագետի և կոնսուլտանտի հսկողության և ուղղորդման միջոցով:

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ա) Գիտահետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է սկսնակ հետազոտողի մոտ գիտական հետազոտական կարողությունների ձևավորումը:

բ) Գիտահետազոտական աշխատանքը ասպիրանտական և հայցորդական ուսումնառության տարիներին որոշվում է տվյալ անձի կողմից ընտրված

ատենախոսական թեմայի պլանի կետերին համապատասխան ղեկավարի, փորձագետի հսկողության տակ:

գ) Գիտահետազոտական աշխատանքի կատարման հետևանքով ստացված արդյունքները կիրառելու կարողությունների և հմտությունների ձևավորման կարողություն:

դ) Սկսնակ հետազոտողների ծրագրով գիտելիքների, կարողությունների և հմտությունների հաղորդման արդյունքում բուհում դասավանդելու և ապագա սերնդի դաստիարակչական կարողությունների ձևավորում:

ե) Մասնագիտական, գիտական, ստեղծագործական կատարելագործում:

զ) Ժամանակակից գիտական հետազոտական և արդյունքների մշակման տեխնոլոգիաների ձևավորում:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ա) Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը որոշվում է ԿԳՆ-ի, բուհի ասպիրանտուրայի բաժնի, տվյալ ամբիոնի կողմից: Գիտահետազոտական աշխատանքը կարող է իրականացվել.

- Ասպիրանտների, հայցորդների համար ԿԳՆ-ի կողմից ընդունված ծրագրին համապատասխան:
- Երիտասարդ գիտնականների համար՝

1. թեմատիկ ֆինանսավորման շրջանակներում ՀՀ ԿԳՆ-ի կողմից հաստատված պետբյուջեից ֆինանսավորվող գիտական հայտերին համապատասխան,
2. բազային ֆինանսավորման շրջանակներում ՀՀ ԿԳՆ-ի կողմից հաստատված պետբյուջեից ֆինանսավորվող գիտական հայտերին համապատասխան:

3. ամբիոնային գիտական հետազոտությունների շրջանակներում, դասախոսների տարեկան անհատական պլաններում նշված թեմաներին համապատասխան,
4. այլ գրանտային ծրագրերի շրջանակներում,
5. նախասիրությունների շրջանակներում:

բ) Սկսնակ հետազոտողները ասպիրանտուրայում կամ հայցորդական ծրագիր իրականացնելիս անցնում են հումանիտար և ընդհանուր պատրաստվածության դասընթացներ՝ ընդամենը 570 ժամ, հանձնում որակավորման քննություններ օտար լեզվից, փիլիսոփայությունից, ինֆորմատիկայից (ստուգարք) և մասնագիտությունից:

Ծրագիրը նախատեսում է 360 ժամ մասնագիտական պատրաստվածության դասընթացներ, հետազոտական աշխատանք՝ 4300 ժամ, որը ավարտվում է ատենախոսության կատարման, եզրափակիչ ատեստավորման և ատենախոսության պաշտպանությամբ:

- Գիտահետազոտական աշխատանքի կատարման ձևերի ցանկը իրականացվում է ասպիրանտական կամ հայցորդական ծրագրի համաձայն: Գիտական ղեկավարը, համաձայն ծրագրի, կազմում է հետազոտական աշխատանքների ցանկը:
- Գիտական աշխատանքի թեմայի հաստատումից հետո ասպիրանտը (հայցորդը) գիտական ղեկավարի հետ կազմում է սկսնակ հետազոտողի ատենախոսության պլանը:
- Հետագա հետազոտական աշխատանքները կատարվում են ըստ պլանի գիտական ղեկավարի հսկողության տակ:
- Ասպիրանտուրայում գիտահետազոտական աշխատանքները ավարտվում են ատենախոսության պաշտպանությամբ:

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀՊՄՀ-Ի ԱՍՊԻՐԱՆՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՅՑՈՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ԴՈՒՐՍ ՍԿՍՆԱԿ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համալսարանում ստվար խումբ են կազմում ասպիրանտական և հայցորդական համակարգից դուրս գիտահետազոտական աշխատանքով զբաղվողները:

Դրանք հիմնականում այն անձիք են, ովքեր պաշտպանել են իրենց ատենախոսությունը ասպիրանտուրայի և հայցորդության համակարգում նախատեսված ժամանակահատվածում, ինչպես նաև անձիք, ովքեր զբաղվում են գիտահետազոտական աշխատանքով՝ ըստ համապատասխան նախասիրության:

Վերը նշված կատեգորիային պատկանող դասախոսներին և լաբարանտներին գիտահետազոտական աշխատանքին ուղղորդելը և հակվածությունը մեծացնելը կարևոր նշանակություն ունի բուհում գիտության զարգացման առումով:

Ինչպես նաև գիտելիքահենք կրթությունը մասնագետների պատրաստման արդյունավետ ուղին է:

Հետազոտական համալսարանները ենթադրում են գիտության և կրթության միասնականության ապահովում:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը ամրագրում է 2014-2020թթ. գիտության ոլորտի հեռանկարային զարգացմանն ուղղված քաղաքականությունը: Սույն ռազմավարությունը Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտության ոլորտում երիտասարդ գիտնականների ներկա վիճակի, առկա հիմնախնդիրների, հեռանկարային զարգացման նպատակների և ուղղությունների մասին դրույթների ամբողջություն է:

Ռազմավարության նպատակն է.

- գիտության ոլորտում մեծացնել երիտասարդ գիտնականների հաշվեկշիռը,
- նպաստել բարձր որակավորում ունեցող երիտասարդ գիտնականների ներգրավմանը կրթության համակարգ,
- ապահովել երիտասարդ գիտնականների ներհոսք գիտության ոլորտ,

- խթանել գիտության և արտադրության կապին,
- ստեղծել ծրագրեր, պայմաններ սկսնակ հետազոտողների աճի և զարգացման համար,
- երիտասարդ հետազոտողների ընդգրկում միջազգային ծրագրերում,
- նպաստել համալսարանում հոգեբանամանկավարժական, հայագիտական, բնագիտամաթեմատիկական և այլ գիտություններում երիտասարդ հետազոտողների ներգրավմանը,
- նպաստել սկսնակ հետազոտողների ոլորտի կայուն զարգացումն ապահովող ոլորտի ձևավորմանը:

Թիրախները.

1. ասպիրանտուրայում և հայցորդական համակարգում ընդգրկված սկսնակ հետազոտողներ,
2. կրթության III աստիճանն ավարտած երիտասարդ հետազոտողներ:

Գիտության, կրթության և տեխնիկայի բնագավառը բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերով համալրելու համար անհրաժեշտ է ստեղծել իրավական, տնտեսական և կազմակերպական պայմաններ: Հարկավոր է մշակել գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման հիմնավորված ծրագիր: Մեծ նշանակություն է ձեռք բերում բարձր որակավորում ունեցող մասնագետների գիտական ներուժի նպատակային օգտագործումը՝ չբացառելով գիտելիքի առևտրայնացման ասպարեզում առկա հնարավորությունները: Երիտասարդ կադրերով համալրելու նախապայմանը գիտական կադրեր պատրաստելու պետական պատվերի ձևավորման մեխանիզմի հստակեցումն է, որը կնպաստի գիտության մեջ իրենց ապագան պատկերացնող երիտասարդների ընտրությունը:

Անհրաժեշտ է գիտական և գիտակրթական կադրերի պատրաստման գործող եղանակները համալրել նորերով, ասպիրանտական ուսուցում կազմակերպելով հետազոտական համալսարաններում:

Հրատապ է ասպիրանտական և հայցորդական կրթության՝ որպես բարձրագույն կրթության III աստիճանի բովանդակային բարեփոխումներ, մշակել ատենախոսության գիտական մակարդակի բարձրացմանը նպաստող մեխանիզմներ և ներդնել գիտական աստիճանաշնորհման առավել արդյունավետ համակարգ:

Այդ միջոցառումները պետք է զուգակցվեն երիտասարդ գիտանականների սոցիալ-տնտեսական, նրանց կողմից կատարվող հետազոտությունների աջակցության մեխանիզմների ձևավորումով և ներդրումով:

Բացի այդ անհրաժեշտ է մշակել միջազգային առաջատար կերտրոններում երիտասարդ կադրերի պատրաստման պետական ծրագիր:

Երիտասարդ կադրերի պատրաստման նպատակով խիստ կարևորվում է ձևավորել գիտնականի մասնագիտական կարիերայի հստակ մեխանիզմներ: Գիտական ներուժի նպատակային վերարտադրությանն ուղղված միջոցառումները պետք է ուղեկցվեն գիտական աշխատանքներն արդյունավետ կատարելու համար համապատասխան պայմանների ապահովմամբ և մասնագիտական կարիերայի գրավչության բարձրացմամբ:

Գիտության ոլորտի նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների ստեղծումը և պահպանումը անհրաժեշտ է իրականացնել միասնական ծրագրերի շրջանակներում, որը հնարավորություն կտա արդիականացնելու, որոշ դեպքերում նաև ստեղծելու գիտության ոլորտի այլ ենթակառուցվածքներ, բարձրացնելու գիտական սարքավորումների օգտագործման արդյունավետությունը, ստեղծելու եզակի և թանկարժեք հետազոտական սարքավորումների համատեղ օգտագործման կենտրոններ:

Հատկապես ուշադրության է արժանի երիտասարդ գիտնականների աշխատանքների հրատարակումը միջազգային և հայրենական գրախոսվող ամսագրերում և ժողովածուներում:

Գիտահետազոտական աշխատանքների իրականացման կրողը գիտական լաբորատորիաներն և ամբիոններն են:

Յուրաքանչյուր գիտական կառույց պետք է ունենա սկսնակ հետազոտողների համախմբումը կենտրոնական գաղափարի շուրջ: Մանրաթեմայնությունը ամբիոններում արդյունավետ չէ:

Առավել ուշադրություն դարձնել գիտական թեմաների ընտրության, թեմայի իրականացման պլանի կազմման և պարբերական խորհրդատվության վրա:

Ամբիոնի նիստերում պարբերաբար լսել հաշվետվություն կատարած աշխատանքի արդյունքների, ներդրման հնարավորությունների մասին:

Խիստ անհրաժեշտություն է առաջանում սկսնակ հետազոտողի գիտական հետագծի մշակման ուղղության:

Գիտահետազոտական աշխատանքները սկսնակ դասախոսների մոտ խթանելու նպատակով ռեյտինգի հաշվարկման բաղադրատարրերի մեջ մտցնել նաև հետազոտական բլանկը: Այն իր մեջ պետք է ներառի.

1. հրատարակված մենագրություն,
2. հրատարակված հոդվածներ գրախոսվող պարբերականներում,
3. մասնակցություն և ելույթներ գիտաժողովներում,
4. գիտական արդյունքի ներդրում,
5. հեղինակային իրավունքի արտոնագրի ձեռք բերում,
6. մասնակցություն գիտական գրանտային ծրագրերին:

Սկսնակ հետազոտողների համար նախատեսել կլոր սեղաններ, քննարկումների տարբեր ձևաչափեր, որտեղ պատկերացում կտրվի գիտական աշխատանքի կատարման, արդյունքների ամրագրման և հրատարակման մասին:

Գիտահետազոտական աշխատանքներին օժանդակելու արդյունավետ միջոցը երիտասարդ գիտնականներին ֆինանսապես օժանդակելը և նպաստավոր պայմաններ ստեղծելն է, հատկապես՝ ապահովումը ժամանակակից տեխնիկապես հագեցած լաբորատորիաներով: Սկզբնական շրջանում անհրաժեշտ է ստեղծել միջհամալսարանական կամ միջֆակուլտետային լաբորատորիաներ, խիստ արդյունք ստեղծելու դեպքում այն մասնավորեցնել և ընդլայնել:

Ներկայիս կիրառական համակարգի բնութագրիչ կողմերից է լայն շարժունականությունը, ինչպես ուսումնական, այնպես էլ գիտական առումով:

Ժամանակակից գիտության նվաճումներն և գիտական մեթոդաբանությունը ենթադրում է գիտնականների՝ այլ առաջավոր գիտական հաստատություններում որակավորման բարձրացում, վերապատրաստում:

Ինչպես նաև առաջավոր գիտական դպրոցներից մասնագետների համատեղ գործունեության ծավալում մեր բուհի գիտական ստորաբաժանումներում: Գիտության զարգացումը ենթադրում է նաև գիտական արդյունքների ներդրում և մասսայականացում: Հասնել նրան, որ կատարված գիտական աշխատանքները առավելագույնս ծառայեն բուհի հիմնախնդիրներին:

Ենթադրվում է, որ դա հիմնականում պետք է վերաբերվի հոգեբանական, մանկավարժական գիտություններին և դրանց մեթոդաբանությանը:

Պաշտպանված ատենախոսությունները պետք է ներդրվեն գիտական շրջանառության կամ ուսումնական գործունեության մեջ: Այստեղ մեկ անգամ ևս պետք է ուշադրություն դարձնել կատարված աշխատանքի գիտականության և որակի վրա: Միայն որակյալ գիտական արդյունքը կարող է ունենալ կիրառական արժեք:

Խիստ կարևոր է գիտնականների հոդվածների հրատարակման աշխատանքները: Ներկայումս բուհում առկա են պարբերականներ, որոք ԲՈՀ-ի կողմից ներառված են ընդունելի գիտական պարբերականների հրատարակությունների ցանկում: